



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 25րդ շրջանի բաժնորդագրին է 20 ֆրանգ. Թիւրքիաի և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, ԿԱՆԻՍԿԻ Կարելի է նաև բաժնորդագրուել քանի ամսի համար որ ուզուի, ամէն մէկ ամսականը 2 ֆր. (Թիւրքիաի և Պարսկաստանի համար 1 ֆր.) հաշուելով: Նամակ և ծրար պէտք է լրկել այս հասցեով: M. PORTOUKALIAN

Directeur du journal Arménia MARSEILLE (France)

ԻՆ ՏԱՐԻ

ԹԻՒ 35

1910 ՅՈՒԼԻՍԻ 2 ՇԲԹ.

(Ղ. Յ. Յունիս 19)

ԳՆՏՄԱՆՆԵՐ

Իմբրագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Գարտուոր չէ վերագործունել չհրատարակուած ձեռագիրները: Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Ծանուցումն 1 միջակգրը 1 սանդիկ կարծէ. 1 գլխագիրը 2 սանդիկ:

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction: Place Alexandre-Labadie, 17.

ԲԱԺՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

“ԱՐՄԷՆԻԱ”

ԻՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ (1909 ՆՈՅՄԲԵՐ — 1910 ՍԵՊՏԵՄԲԵՐ)

Ամբողջ 25րդ տարեշրջանի բաժնորդագրին է 20 ֆրանգ (4 տուար ամերիկեան կամ 7 ռուբլ և 50 կպլ. ուսական) ամէն տեղի համար, ի բաց առեալ Թիւրքիան և Պարսկաստանը, ուր կը լրկուի կէս բաժնորդագրով, այսինքն ամբողջ տարեշրջանին համար 10 ֆրանգ բաժնորդագրով: Կարելի է բաժնորդագրուել նաև քանի ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ (40 սէնդ = 75 կպլ.) հաշուելով, կամ 1 ֆրանգ Թիւրքիաի և Պարսկաստանի համար:

Յայտնի է արդէն թէ անոնք որ «Արմէնիաի Օթանդակ» արձանագրուած են մեր հրատարակած Օթանդակութեան Կանոնագրին համեմատ, իրաւունք կունենան Արմէնիա ստանալու, քանի անձի համար որ ուզեն, իրենց ստացած լրագրի ծրարին մէջ գրուելով և կէս բաժնորդագրով, այսինքն ամբողջ շրջանին համար 10 ֆրանգով կամ ամսական 1 ֆրով: Կարելի է նաև Օթանդակի նշանակած բաժնորդի հասցէին ուղղակի լրկել թերթը, 12 1/2 ֆր. (2 1/2 տր.) բաժնորդագրով:

Ամերիկաի Միացեալ-Նահանգների Մէսսէչուսէց նահանգին մէջ բնակողների դիւրութեան համար, կը նշանանակենք «Արմէնիաի Օթանդակ»ներէն Տիար Մաղաք Պէրպէրեանի հասցէն, որին կարելի է դիմել թէ՛ բաժնորդագրուելու և թէ՛ մեր հրատարակած տետրակներ ու գիրքեր դիւրութեամբ ստանալու համար: Ահա այդ հասցէն. M. G. Berberian 94, Front str. WORCESTER Mass.

Նոյնպէս նաև Ենթադի, նաև ձեռքի նահանգներին մէջ և ատոնց մատակայ տեղեր գտնուողները կրնան դիմել «Արմէնիաի Օթանդակ»ներէն Տիար Տիգրան Միգրադեանին որի հասցէն է Dikran Mizrajian 121 P. O. Box WEST HOBOKEN N. J.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տուն իմ տուն ալօրից կոչեցի. — Հայեր ի Թիւրքիա. — Ատանաի վալիին այցելուելուց Գուրեան պատրիարքին. — Սասունի կրթական գործին հրատարակում. — Ղ. Յ. Ղ. Միտրեանի Իզմիրի մասնագիտը. — Յառաջաբան ժամանակակից պատմագրութեան մը. — Հայ ուսանողի մը փայլուն լազողութիւնները Նիւ Եորքի համալսարանին մէջ. — Նամակ Ամերիկաի Միացեալ-Նահանգներին (Նիւ Եորք). — Օսմանեան պատուիրակութեան Կ. պոլիս վերադարձը. — Պուլկարիաի վեհապետները Փարիզի մէջ. — Թիւրքիաի լուրեր. — Յունաստանի մանական յարաբերութիւնները. — Մանուգումներ:

ՏՈՒՆ ԻՄ ՏՈՒՆ ԱՂՕԹԻԿ ԿՈՆԵՍՏ

Եկեղեցիներին մէջ ժողովուրդին օգտակար ատենախօսութիւններ ընելը իրրև սրբապղծութիւն արգիլել տալու համար գտնուեցան նաև այնպիսի գրողներ որոնք իրր թէ հաստատելու համար որ եկեղեցիներին մէջ աղօթք միայն պէտք է լուրի, վկայութիւն բերին Քրիստոսի այս խօսքը թէ «Տուն իմ տուն աղօթից կոչեցի»: Որովհետև ատոնք կրօնական փաստերի դիմելով կուշին զրգուել միամիտ հաւատացեալները դիւրազգածութիւնները՝ ժողովուրդին խօսիլ և անոր միտքը լուսաւորելու ուղղութիւն դէմ, մենք ալ հարկ կը համարենք կրօնական փաստերով ցոյց տալ թէ բոլորովին անտեղի է Աւետարանէն իրենց բերած այդ վրկայութիւն՝ եկեղեցիներին մէջ աղօթքէ զատ հրապարակախօսութիւններ լինելուն դէմ:

Նախ պէտք է նկատի առնել թէ Քրիստոս ինչ պարագայի մէջ, ինչ կերպով և որի՞ դէմ խօսած է այդ խօսքը:

Երբ Յիսուս Չատիկի տօնին մօտ, տեղական սովորութեան համեմատ էջի վրայ հեծած Երուսաղէմ գնաց և ժողովուրդն ալ իր առջևէն ու ետևէն կերթար ուսանանա՝ պօռալով հանդիսաւորապէս, տաճարը մտած ատեն հոն տեսաւ որ աղանի, ոչխար և ուրիշ բաներ ծախողներ, դրամափոխներ և այլն տեղաւորուած, շուկայ մը դար-

ձուցեր էին եկեղեցին և առուտուր կրէին: Յիսուս բարկացաւ և չուանէ խարազան մը շինելով, ատոնք ամէնքը քշեց դուրս հանեց եկեղեցիէն, ըսելով թէ գրուած է որ «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, իսկ դուք աւազակներ յարայր էք դարձուցեր (1)»: Ժողովուրդն այդ որ տեսաւ, Քրիստոսի համար կեցցէ՛ (ովսաննա՛) պօռաց եկեղեցիին մէջ: Քահանայապետները, դպիրները և ժողովուրդի գլխաւորներն իրր թէ գայթակղած բարկացան և դիտողութիւն ըրին Քրիստոսին, որ պատասխանեց թէ չէ՞ք կարդացած «Ի բերանոյ տղայոց և ստնդեաց կատարեցեր զօրհնութիւնը»: Եւ ինք սկսաւ հրապարակախօսել այնտեղ ժողովուրդին (եւ ուսուցանէր զնոսա ի տաճարին և ասէր...): Քահանայապետները, դպիրները և աղաները (զիսաւորք ժողովրդեանն) կուղէին մէջտեղէն վերցունել զինքը (կորուսանել զնա), բայց կը վախնային սրովհետև ժողովուրդի ահագին բազմութիւն չորս կողմէն կը վազէր կուգար կը լցուէր եկեղեցին, անոր հրապարակախօսութիւնները մտիկ ընելու համար (եւ ոչ գտանէին թէ զի՛նչ արասցեն զի ժողովուրդն ամենայն կախեալ կային զնմանէ ի շաղ: Ղուկաս ԺԹ. 47-48):

Ուրեմն, փոխանակ Աւետարանէն մէկ տող միայն մէջ բերելու, եթէ ամբողջ պատմութիւնը կարդացուի, կը տեսնուի որ «Տուն իմ տուն աղօթից կոչեցի» խօսքը այնպիսի պարագայի մը մէջ լինած է Յիսուս, վկայութիւն բերելով Հին Կտակարանէն, որ իրր փաստ աւելի կը յարմարի եկեղեցիներին մէջ աղօթքի ատեն դրամ ժողովուրդ համար պնակներ պարտցունելը արգիլելու, քան թէ հրապարակախօսութիւնն արգիլելու, քանի որ Յիսուս, եկեղեցին իրենց խանութ գարձունելով հոն առեալը:

(1) Միջանկեալ ըսենք որ «Տուն իմ տուն աղօթից կոչեցի» խօսքը Քրիստոսինը չէ, այլ Նսայի մարգարէի գրուածքէն վկայութիւն բերած է Քրիստոս, Հրեայ վաճառականներին յանդիմանելու համար:

րով դրաւորները դուրս վաճառել յետոյ, ինք տաճարին մէջ կեցաւ և ուսուցանելու համար հրապարակախօսեց ժողովուրդին, ատոր դէմ այն ժամանակի կղերականներն և այսաներն հանած արգելքներն և գործադրած դաւադրութիւններն հակառակ (2):

Վերոյիշեալ պարագայէն զատ՝ «տուն աղօթից» բառը ոչ մի տեղ գործածուած կայ Աւետարանին մէջ, այլ ընդհանրապէս գործածուած է եկեղեցի (է.բլիսիա) յունարէն բառը, որ կը նշանակէ ժողովուրդ և կամ ժողովարան. նոյն իմաստով գործածուած կը տեսնենք յաճախ ժողովուրդ հայերէն բառը (3): Ղուկասի Աւետարանի թարգմանիչը ժողովրդականաց բառն ալ գործածած է երկու տեղ (4): Իսկ աղօթատուն բառ՝ երբէք ոչ մի տեղ: Ուրեմն եկեղեցին աղօթքի տուն լինելու չափ, եթէ չըսենք անկէ աւելի, յատկացուած է ժողովուրդի գումարման տեղ մը լինելու, հոն ուսանելու և ուսուցանելու համար:

Արդէն Աւետարանի ողիին համեմատ՝ աղօթքի համար յատկապէս տեղի պէտք չկայ: Քրիստոս յանձնարարած է աղօթել առանձինն և ըզգուշանալ երկարորամութիւններէ (5): Իսկ եթէ աղօթատեղիի պէտք ըզգացուած է, ոչ թէ բուն աղօթքին համար է, այլ աղօթքի ժողովներ ընելու համար, ուսանելու, ուսուցանելու և աղօթքի վարժեցունելով իրար սրբտապնդելու համար: Քրիստոսն էութեան նախնական դարերին մէջ՝ եկե-

(2) Համեմատել Մատթ. ԻԱ. Մարկոս ԺԱ. Ղուկաս ԺԹ. 29-48 և Ի. Յովհ. Բ. 12-17:

(3) Եւ մտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա և զարմանային ընդ վարդապետութիւնն նորա զի ուսուցանէր իրր և ի իսանութեամբ և ոչ որպէս դպիրքըն (Մարկոս Ա. 21): Եւ եմուտ ըստ սովորութեան իւրում յաւուր շարաթուի ժողովուրդն (Ղուկաս Գ. 16): Եւ այլն:

(4) Եւ ուսուցանէր ի միում ի ժողովուրդեաննցայն յաւուր շարաթու (Ղուկաս ԺԳ. 10): Զի սիրէ գազգ մեր և զժողովրդանոցն նա շինեաց մեզ (Ղուկաս Է. 5):

(5) Մատթ. Զ. 5-15:

դեցինքն իրենց տուններն, իրենց բը-
նակարաններն էին. ուր որ կուտէին,
կը խմէին, կը պառկէին, հոն ալ կը
ժողովուէին, հոգեշահ բաների վրայ
կը խօսակցէին, կաղթէին, զանազան
ընկերներէ եկած նամակներ կը կար-
գային և այլ կը կուտէր եկեղեցի
(6), սրբապղծութիւն մը չէր համար-
ուեր այդ Առանց արթատան, առանց
յատուկ շէնքի եկեղեցի կը լինի,
բայց առանց ժողովրդի եկեղեցի չը-
լինիր. նութականը, քարը, փայտը չէ
որ եկեղեցին կը կազմէ և սուրբ է,
այլ ժողովուրդն է որ եկեղեցին կը
կազմէ և նուիրական է այն ժողովրդի
հոգեկան, մտաւոր զարգացման հա-
կառակոյն է որ կը սրբապղծէ եկե-
ղեցին: Բրիտոսոս կառանձնանար արօ-
թելու համար. իսկ եկեղեցին (տաճա-
րը) կերթար հրապարակախօսելու,
ժողովրդին ուսուցանելու համար:

Բրիտոսոսի այս առթով Սամարացի
կնոջ ըսածները շատ խրատական են և
մեծ նշանակութեան արժանի. «Եկեղեցի
ժամանակ յորժամ ոչ ի լերինս յայսմիկ
և ոչ յերուսաղէմ երկիրպագանիցեն
Հօր: Դուք երկիրպագանէք որում
ոչն գիտէք մեք երկիրպագանեմք
որում գիտեմք: Հօգի է Աստուած
և երկիրպագուաց նորա պարտ է հոգ-
շով և ճշմարտութեամբ երկիրպագա-
նել:» (Թովհ. Դ. 21-24):

Մարդ ո՛ւր որ ալ լինի և մարմի-
նը ի՛նչ փոքրի մէջ ալ գտնուի, հոգին
կրնայ արթել և ծունր կրկնել Աս-
տուծոյ առջև: Մտածումներ կան
որոնք արթը են, Հանրօրուտ ատե-
նախօսութիւններն ալ եկեղեցիներին
մէջ հասնել են Աստուծոյ, սաղմուսեր-
գութեան պէս:

Հայ շէրիաքձիներին Աւետարանէն
բերած վկայութիւնը՝ թէ եկեղեցին
արթի տուն միայն պէտք է լինի և
հոն հրապարակախօսութիւն ընելը
սրբապղծութիւն է, ահա բուն իսկ
Աւետարանով կը հերքուի:

Հիմա տեսնենք թէ մասնաւորա-
պէս մեր հայ եկեղեցիներին մէջ ժո-
ղովներ և հրապարակախօսութիւններ
ընելու սովորութիւն կ'ա՞յ թէ ոչ. և թէ
Վեհ. կաթողիկոսի կոնդակը բողոքովին
կարգ լի՞՞ եկեղեցիներին մէջ հրապա-
րակախօսութիւններ ընելը, ինչպէս կը
մեկնեն ոմանք, անոր մէջէն արգելոյ
բառը միայն առնելով, առանց նկատի
առնելու թէ ի՛նչ պատճառով կուզէ
արգելիլ և ի՛նչ բանը արգելիլ:

(Շարունակելի)
Մ. Փ.

ՀԱՅԵՐ Ի ԹԻԻՐԲԻԱ

Վանի առաջնորդական փոխանորդ
Տ. Մեսրոպ քհնյ. Ճանիկետն Գա-
ւառական ժողովի որոշման համեմատ
հեռագրով դարձեալ խնդրած էր
(6) Եւ առտնին եկեղեցւոյն շոցա ոչ
լոյն (Հուլիս. Ժ. 5): Ոչլոյն տալիք...
Նիսիայ և որ առտնին եկեղեցին է նո-
քա (Կողոսացւոց Դ. 15): Եւ այլն:

պատրիարքարանէն որ վիճակին
առաջնորդական Տեղապահ նշանակ-
ուի Տ. Յովսէփ Արքեպիսկոպոս Սա-
րաճեան. իսկ եթէ նա չընդունի, Տ.
Գրիգորիս վ. Պալագեանը: Որով-
հետեւ Սարաճեան արքեպ. Ամերիկա
կը գտնուի, թառն ժողովը յունիս
2/15ի նստին մէջ որոշեց ստանալ
նախ Ամենայն Հայոց կաթողիկոսի
հաւանութիւնն այս մասին և ապա
գրել Ամերիկա ու հրաւիրել զինք
այդ պաշտօնի:

Թառն ժողովը նոյն նստին մէջ
Խարբերդի առաջնորդութեան հա-
մար ցանկ մը կազմել է 3 ընտրե-
լիներէ բաղկացած որոնք են Ասա-
նեան Գեորգ, Գասպարեան վարդան
և Սահակեան Շաւարշ վարդապետ-
ները:

— Վանէն կը հաղորդեն թէ վա-
նի, Թիմարի, Արճակի, Բերկրիի և
Հայոց Չորի արձանագրուած Հայ
զօրքերի թիւն եղած է 2800, որոնց
մէջ 370ը տարիքի սրբագրութեամբ,
1263ը մեռած, տկարակազմ կամ
մուշկ (իւր ընտանիքի նեցուկ) դուրս
գալով՝ մնացած է 1167 հոգի զին-
ուորութեան համար քուէ քաշող:
Ասոնցմէ ալ 117ը քերթիպը աւանի,
իսկ 1050ը բուն զինուոր եղած են:

— Կ. Պօլսի մէջ «Հայոց Հրատա-
րակական ընկերութիւն» մը կազ-
մուելու վրայ է, որի հիմնադրական
առաջին ընդհանուր ժողովին նախա-
գահած է Դուրեան գրագետ-պատ-
րիարքը:

— Առանաէն բազմաստորագիր
հանրագրով մը խնդրուած է Պո-
տուրումի մէջ բանտարկուած Հայերի
արձակումը, որոնցմէ մէկ քանիին
քոյրերն ալ Կ. Պօլսի գնացել են
ոյժ տալու համար այդ խնդրանքին:

— Մուշէն վրդովիչ լուրեր կը
չարունակեն գալ: Գիւրտեր մի քա-
նի գիւղացի Հայեր սպաննած են:
Ս. կարապետի վանքն ալ անուղղա-
կի կերպով խուզարկութեան են-
թարկուել է: Ասոնց համար Ասալ-
նորդ Խարախանեան եպիսկոպոսի
բողքները՝ թէ՛ տեղական կառավա-
րութեան և թէ՛ Կ. Պօլսի պատրիար-
քարանի՛ն ապարդիւն մնացած լինե-
լով, Խարախանեան իր առաջնորդա-
կան պաշտօնէն հրաժարական շրկել
է պատրիարքին և քաշուել է Ս. կա-
րապետի վանքը: Պատրիարքարա-
նը չէ ընդունել Խարախանեանի հը-
րաժարը և յուսադրելով հրահանգել
է շարունակել իր պաշտօն:

Նորչէն գիւղացի երկու հայ կա-
թողիկոսներ ալ քիւրտերէ սպաննուած
լինելով, հայ կաթողիկոսների պատ-
րիարքարանն ալ յուզուած է և կը
մտաւանջուի Տարօնի վիճակին հա-
մար:

— Հայ կաթողիկոսների նորընտիր
Կ. պատրիարքը յունիս 8/21ին
պաշտօնապէս և հանդիսաւոր կերպով
կայսերական պալատն երթալով, սուլ-
դանէն ընդունուեցաւ: Թէրզեան
պատրիարքը շնորհակալութեան ու-
ղերձ մը կարդաց և մաղթանքներ
ըրու սովորութեան համեմատ: Այ-

նուհետեւ խօսակցութեան միջոցիւ
յայտարարեց թէ իրենք Առանաի
մէջ արտուենք կը թափէին երբ իմա-
ցան Մէհմետ Լ.ի գահակալութիւնը
որ եկաւ մեծ ուրախութիւն պատ-
ճառել իրենց: Սուլթանը պատաս-
խանելով սաստիկ ցաւ յայտնեց
Առանաի աղէտին համար և յարեց
թէ ինք այդ օրեր յուզումէն մէկ
քանի գիւղեր չէր կրցած քննալ և
իւր սրտէն արիւն կերթար: Կ. պատ-
րիարքը կայսերական պալատէն հան-
դիսաւորապէս գնաց Բ. Դուրը ուր
վարչապետին բացակայութեան պատ-
ճառով անոր խորհրդական Ատիլ պե-
յի հետ տեսակցեցաւ: Ի միջի այլոց
խօսեցաւ Առանաի մասին, ինչպէս և
վերջերս Մուշի մէջ տիրող անապահո-
վութեան մասին ուր գիւղացի երկու
հայ կաթողիկոսներ սպաննուած են: Պա-
տրիարքը միջոցաւ շնորհակալութեամբ
չէ վերջ տալու Դուրեանի մասին և յայտարա-
պէս պիտի աշխատի կարգադրելու
Թլանի ագարակին և հանգուցեալ
Մկրտիչ կաթողիկոսի ժառանգու-
թեան խնդիրները: Ճէմալ պէյ սի-
րալի կերպով հրաժեշտ առնելէ ետք
մեկնեցաւ Պատրիարքին քովէն, հա-
ղորդելով թէ մէկ երկու օրէն պիտի
վերադառնայ Առանա: Խօսքը դար-
ձաւ նաև Անատոլի անդորրու-
թեան մասին: Պատրիարքը իր տե-
սութիւնները պարզեց:

— Յայտնի է որ Չիւսի Առաջ-
նորդական տեղապահ Տ. Արսէն վ.
Վեհունի՛ կուսակալին դիմած էր ար-
գիլել տալու համար եկեղեցիին մէջ
ժողովրդական գումարումները: Չիւսի-
նի կուսական այս նկատմամբ Բ.
Դուրը տեղեկագրած և միանգամայն
հրահանգ խնդրած լինելով, ներքին
գործերի նախարարութեան իրեն
գրուել է թէ «Աղօթատեղիների մէջ
բարեկարգութեան և կարգապահու-
թեան գործը կը վերաբերի հոգևոր
պաշտօնեային: Կառավարութիւնը
պէտք չէ ատոր միջամտէ գործնակա-
նապէս, այլ երբ նախնորդները գը-
րաւորապէս օգնութիւն պահանջեն,
կառավարութիւնը հարկ եղած մի-
ջոցը պէտք է գործադրէ անդորրու-
թիւնը շխանարուելու համար մի-
այն:»

— Դուրեան պատրիարք իր
պատրիարքական անդրանիկ կոնդա-
կը հրատարակած է այս տարի մայիս
24ին (յնս. 6), «յառաջնում աւուր
Թիւնամեկի Աղբ. Սահմանադրու-
թեան» կոնդակը որ բաւական եր-
կար է, հոգեշահ խրատներ կը պա-
րունակէ թիւրքերանակ հայ ժողո-
վըրդին ուղղուած:

**ԱՏԱՆԱԻ ՎԱԼԻԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ
ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ**

Ազատամարտի մէջ կը կարդանք:
«Դուրեան Պատրիարք երէկ (9/22
յնս.) ժամը 8ին Պատրիարքարանի
մէջ ընդունեց Առանաի կուսակալ
Ճէմալ պէյը որ մէկ ժամու չափ մը
տերմական տեսակցութիւն ունեցաւ:
Պատրիարքին հետ Ճէմալ պէյ մաս-
նաւոր համակրանքով խօսեցաւ կի-
լիկիոյ կաթողիկոսին նկատմամբ:
Պատրիարքին նպատի խնդրին առ-
թիւ ուղղած հարցման ի պատաս-
խան յայտնեց թէ Հաճընի եկեղե-
ցապատկան խուցերուն շինութեան

յատուկ 500 ոսկին յանձնուած է
արդէն, իսկ ուղղակի տեղեկութիւն
մը չունի Հալէպի 6.000 ոսկիի մա-
սին, բայց վերադարձին հոգածու
պիտի ըլլայ: Ճէմալ պէյ Առանաի
օսմանեան որբանոցին նկատմամբ իր
լաւատեսութիւնը յայտնելէ ետք ը-
սաւ թէ որբերուն 100ին 90ը հայ
ըլլալով, մեծամասնութիւնը հայերէն
լեզուով կը խօսի. սակէ զատ ինքն ալ
անդամ ըլլալով «Իթթիհատ»ի, ա-
նոր սկզբունքը կը գործադրէ, ա-
մէն ազգի նախնական կրթութիւնը
իւր մայրենի լեզուով աւանդուելու
համար: Պատրիարքը իր գոհունա-
կութիւնը յայտնեց և յանձնարարեց
կուսակալին իր խնամքը անպակաս
ընել այդ ընտանեկուրկներու մասին:
Ճէմալ պէյ լաւատես է Առանաի կա-
ցութեան նկատմամբ և յայտարա-
րած թէ վերադարձին մասնաւորա-
պէս պիտի աշխատի կարգադրելու
Թլանի ագարակին և հանգուցեալ
Մկրտիչ կաթողիկոսի ժառանգու-
թեան խնդիրները: Ճէմալ պէյ սի-
րալի կերպով հրաժեշտ առնելէ ետք
մեկնեցաւ Պատրիարքին քովէն, հա-
ղորդելով թէ մէկ երկու օրէն պիտի
վերադառնայ Առանա: Խօսքը դար-
ձաւ նաև Անատոլի անդորրու-
թեան մասին: Պատրիարքը իր տե-
սութիւնները պարզեց:»

ՍԱՍՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ԵՊՈՍՏ

Սուլթան Համիտի բանապետու-
թեան դէմ իր քաջագործութիւննե-
րով և իր անձնութեամբ հոգակ
հանած Սասունցի Անդրանիկը որ
այժմ Պուլկարիա կը գտնուի, այն
տեղի հայաբնակ քաղաքներին մէջ
հրապարակախօսութիւններ ընելով
կը յորդորէ որ օգնեն Սասունի
կրթական գործին, վարժարաններ
բանալու համար Սասունի գիւղերին
մէջ: Տարօնի Աղբ. Առաջնորդարանի
Ուսուցիական խորհուրդէն պաշտօ-
նապէս արդէն դիմում եղած էր ի-
րեն ատոր համար:

Անդրանիկի աշխատանքը, մի քա-
նի նախանձոտների թշնամու-
թիւններին հակառակ, ուրախացու-
ցիչ արդիւնք մ'ունեցած է: Պուլ-
կարիաի Հայերն առատաձեռնու-
թեամբ պատասխանած են Անդրա-
նիկի կոչին և անոր կարգադրութեան
համեմատ Կ. պօլսի պատրիարքարա-
նը շրկուած են հանգանակուած նը-
պատները, անկէ ալ Մուշի առաջ-
նորդարանը շրկուելով նպատակին
ծառայեցնել տալու համար:

ԵԶԻՏԻՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ԴԻՄԵՆ

Ճէզիրէի (Տիգրանակերտ) Գաղ-
ղէացիներու և Ասորիներու առաջ-
նորդները իրենց քանի մը ազգա-
կիցներով ամբաստանագիր մը մա-
տուցած են տեղական կառավարու-
թեան, ըսելով թէ նոյն տեղի Դանիէլ
քահանայ Յարութիւնեանը Եղիտի-
ները կը հրաւիրէ հայ եկեղեցին
դառնալու: Այս պարագան կը հաղոր-
դուի Ճէզիրէի գալմազափն կողմէ

Տիգրանակերտի կուսակալին, որ կը պահանջէ առաջնորդ Ջաւէն վարդապետ Տ. Եղիաեանէն նոյն տեղէն հեռացնել յիշեալ քահանան Առաջնորդը դէմ կը կենայ այդ պահանջին և ի վերջոյ ծագող միջադէպը կը փակուի երկուստեք համաձայնութեամբ քահանան կը մնայ ճէղիբէ կուսակալը կը հրահանգէ տեղին գաւազամբ սիրով վարուիլ անոր հետ. իսկ առաջնորդն ալ գրով մը կը յանձնարարէ Տ. Գանիէի առիթ չտալ կառավարութեան դժգոհութեան: Մասնաւորապէս զժողովուրդը զարթարան հասած տեղեկութիւններէ կիմացուի թէ 90—100 տուն վրանաբնակ եղիտիներ, մասաւորապէս 3-000 հոգի, փափաքած են ընդունուիլ հայ եկեղեցիի գիրկը: Գանիէ քահանայ վերջերս կը ստանայ կոչնագիր մը՝ ներկայանալու Մէրտինի գատարանը իբր «եղիտիներու զնասակար թելադրումներ» ընդ: Տիգրանակերտի առաջնորդը կը բողոքէ այդ ստնձգութեան դէմ, թէ կառավարութիւնը պարտաւոր էր առաջնորդարանի միջոցով զրկելու այդ կոչնագիրը և հրահանգ կուտայ քահանային չներկայանալ գատարան: Միւս կողմէ սակայն եղիտիներու ցեղապետներէն Շէյխ Իսայի որ անցեալ տարի այցելած էր Պատրիարքական տեղապահ Արշարունի եւ պիտակոսին, ձերբակալուելով կը բանտարկուի Միտիթի (Մէրտին) գաւառակին մէջ: Միւր Իսայիի վրայէն գտնուած թուղթերէն հասկցուած է թէ յարաբերութիւն ունի Հայոց հետ և կը գրդէ եղիտիները քրիստոնէութեան դառնալու: Տիգրանակերտի անգլիական հիւպատոսարանի թարգմանը յանկարծ գտցած է Մէրտին:

* * * Եղիտիներու մասին յօդուածներ երեցած են ասկէ առաջ Ազատամարտի մէջ: Եղիտիները կը բռնակին թուրքիոյ և կովկասի մէջ: Իրենց ընդհանուր թիւը, ըսա եւրոպացի վիճակագիրներու, կը հասնի 50 հազարի, բայց հաւանական կը նկատուի որ 75,000ի չափ ըլլան.

(Ազատամարտ)

Հ. Բ. Ը. Միտիթիի Միտիթիի Միտիթիի Միտիթիի

Ստացած ենք «Հայ. Բարեգրծ. Միտիթի» իզմիրի մասնաճիւղի վեցամսեայ (1909 հոկտեմբեր 1/14—1910 մարտ 5/18) Տեղեկագիրը, որմէ կիմանանք թէ Միտիթիները 400ի չափ տնդամներ ունեցած է իզմիրի մէջ և ճիւղ մ'ալ արձակած է Մադիսիտի մէջ: Մուտքի դրամներէ, ամսաբաժիններէ և նուրբատուութիւններէ իր ամբողջ հասոյթն եղած է 63,316 դրուշ, որմէ հասնելով 1468 դրուշի այլ և այլ ծախքերը, մնացած 61,848 դրուշը (օսմ. լիրան 100 դրուշէն) զրկած է կեդրոնին Գահիլէ:

Իզմիրի մասնաճիւղին վարչութիւնը կազմուած է հետևեալ պատուարժան անձնաւորութիւններէն.

Տիգրանակերտի Պօղոս կոստանտան Առեկուսեան, Գուկաս Եսայեան Ժոյն-Առեկուսեան, Աւետիս Աւետիքեան Առեկուսեան, Միհրան Ազնաւորեան Գաւառապետ, Կարապետ Արապեան, Միսաք Մօրուքեան, Մարգար Էփրէյըր, Յակոբ Ալիբար և Յակոբ Հարենց Խորհրդակալներ:

ՅԱՆՈՒՋԱՐԱՆ

Ժամանակակից պատմագրութեան մը (1)

Հետաքրքրական մը մտով, եթե անասուն ամեայ կենաց մէջ, գրականութեան սերմը թեկուրիւնէս ի վեր թէ այլևայլ երկիրներու և թէ մասնաւորաբար Հայրենիքի (Հայաստան) և ծննդավայրս եղող Տիգրանակերտի նկատմամբ առանց թրուակաւի՝ աւանդական, և թուականներով ակնատես կամ ակնջալուր տեղեկութիւնները, տեսածս կամ կրածս դէպքերի նկարագրութիւնները, իմցած կամ կարգացածս համաշխարհային տէրութեանց վերաբերեալ մասնաւոր լուրերը և քաղաքական խնդիրներէն ոմանց շուրջ եղած յիշատակութիւնները, Ազգային (Վարչական, Կրթական, Զինվորական, Կուսակցական) դարձումները, և անխորոքէն նշանաւոր կամ պաշտօնական անձերու պատահուածքները, երկու մասէ բաղկացեալ, առաջին մասը 1800էն առաջ եղած աւանդականները առանց դասակարգութեան, իսկ երկրորդ մասը 1800էն ետքը մինչև ներկայ ժամանակս պատահած դէպքերը, ամէն մէկը իւր պատկանած տարւոյն մէջ առանձին առանձին տեղադրուած մէջ նշանակելով հազարաւոր պատմական նիւթեր կամ փոփոխի ի պատեհ առիթի հրատարակելու անձկանք:

Դժբաղդարար 1890ին հաստեան բռնակալական ազդեցութեան միջոցին ինչպէս շատերը նոյնպէս և ես կառավարական կասկածանաց ենթարկուելով՝ որչափ որ այն կարգի թղթերը այս և այն ծակեր պահել ստիպուեցայ, բայց 1892 յունուար 9ին պուրժուական մասնութեամբ և կղերական վաւերացմամբ իբր յեղափոխական մի անձ և զնասակար թղթեր ունեցող և հրատարակելու համար պահելու յանցանք՝ երեք ուղտի հակեր լեցուն թէ տպեալ գրքերով և թէ անտիպ տեղադրուելով ձերբակալուելու կառավարական բանտը առաջնորդուեցայ. տասն և չորս ամիս դատավարութենէ ետքը իննամեայ բերդարգելութեամբ դատապարտութեանս մէջ երրորդը տակաւին չլրացած, 1895 յուլիս 11 կայսերական ընդհանուր ներմամբ թէ և բանտարկութենէն ազատուեցայ, սակայն բռնակալութեան ազդեցութիւնը տակաւին շարունակուելուն՝ չէի համարձակեր ի լոյս ածել նպատակակէտս եղող բազմաժամանակեայ հաւաքածոյ աշխատութիւններս. մինչև որ 1908ին Երիտասարդ Թուրքերու յարուցած յեղափոխութեան առթիւ՝ 1876 դեկտ. 11 հրատարակեալ, 1878 փետ. 2 դադարեալ և 1908 յուլ. 11 վերսկսեալ օսմ. Սահմանադրութեան մը Յառաջարանն է այս, որ կը հրատարակեմք, գաղափար մը տուած լինելու համար իր երկասիրած պատմագրութեան վրայ: Սթէ քստուել մեկեանս մը որ յանձն առնէ անոր հրատարակութեան ծախքերը, երկարատեւ աշխատութեան արդիւնք եղող օգտակար գործ մը կորստէ փրկած կը լինի: Աւելի որոշ տեղեկութիւններ ստանալու համար կարելի է բանակցիլ ուղղակի երկասիրողին հետ որի հասցէն է Գեորգ Զաքրձեան, Տիգրայէթի (Թիւրքիա):

ԻՄԱ.

Նադրութեան հաշակումովը ոգևորեալ կենսատու ազատութիւնը թելադրեց զիս թէ գրաքննչութեան սպառման և թէ պահեստանոցներու մէջ փտութեան ենթարկուածներէն ի զատ գէթ ձեռք մնացածները չկորսուելով ներկայ և ապագայ հետաքրքիրներու նկատողութեանը առարկայ ըլլալու համար ներկայ չնչին հաւաքածոյն փութով հրատարակել տալ, մինչ որ կենդանի եմ:

Որչափ որ յակամայս պակասները թէ ցաւ կազդեն մեզ և թէ նսեմութիւն կպատճառեն ձեռնարկիս, սակայն այս թերութիւններ ազդեցութեան արդիւնք լինելուն, անչուտ պիտի ներուին մեզ: Բայց և այնպէս յուսով եմ որ գնահատուելով ընդունելութիւն պիտի գտնէ անկողնակալ ընթացողներէն, թէ և քործոյ ինչ ինչ կէտերը ուրիշ հրատարակութեանց կրկնութիւններ ալ եղած ըլլան:

Գեորգ Կ. ԶԱԳՐՃԵԱՆ
1910 մայիս 13
Տիգրանակերտ

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԻ ՄԸ ՓԱՅԼՈՒՆ ԵՎ ԶԱՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆԻՒ-ԵՆՈՐԷԻ ՀԱՄԱՐԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Նիւ-Եոթքի Համալսարանը շրջանաւարտ ուսանողներին աստիճանները բաշխած է մեծ հանդէսով, յունիսի 18ին. Այդ ուսանողներէ մէջ, որոնց թիւը 500ի կը հասնէր, առաջին եղած է Հայ ուսանող մը, Տիգր Սմբատ Յովսէփ Սարաֆեան, որին իր այդ արժանիքի համար պաշտօն տրուած էր նաև հրատեղութիւն ճառ ըսել ուսանողութեան կողմէն: Evening Mail նիւ-Եոթքեան լրագիրը, ինչպէս և տեղական ուրիշ լրագիրներ, մեծ գիրքով ու գովասանութեամբ յայտարարած է Հայ ուսանողի մը այդ փայլուն յաջողութիւնը: Համալսարանին կողմէ տարեկան շինարկուած նիւթի մը վրայ ամէնէն լաւ գրողին 75 տուարի մրցանակ մը կը տրուի. այդ մրցանակն ալ չափած է Տ. Սմբատ Յ. Սարաֆեան:

Ն Ա Մ Ա Կ ԱՄԵՐԻԿԱԻ ՄԻՍՍԵՍԻ-ՆԱՋԱՆԳՆԵՐԷՆ

Նիւ-Եոթք, 18 Յունիս 1910
Թատկանչանական օր մ'եղաւ այսօր, շաբաթ, ընդհանուր առմամբ Միտիցեալ-Նահանգաց, իսկ մասնաւորաբար Նիւ-Եոթքի համար, որովհետև նախկին նախագահ Թէոտոր Ռուզվելթ 15 ամիսներու բացակայութենէ յետոյ, որ առիթ տուաւ իրեն ճանապարհորդելու 26,500 մղոն տեղ, որսալու 600 վիթխարի վայրենի կենդանիներ, հաւաքելու 13,000 նմոյշներ թռչուններու և կենդանիներու՝ ողջ կամ սպաննուած, տեսնուելու 10 թագաւորներու հետ, բանախօսելու 12 նշանաւոր հաւաքողներու և 100 այլ և այլ ժողովներու մէջ, ստանալու 5 Colleges պատանուներ, կը վերադառնար իր տունը հակառակ այսօրուան իր անպաշտօն վիճակին, դարձեալ ժողովուրդն անմասն ընդունելութիւնով մը յայտարարեց ընդհանուր աշխարհի որ ինք գիտէ արժանաւոր գործիչ տակաւին գնահատել, պատուել և վարձատրել: Անոր հօր բանախօսութիւնները Եւրոպայի այլ և այլ

մայրաքաղաքներուն մէջ իրեն ընծաւ յեցին համաշխարհային համբաւ մը, որ իրմէ առաջ ճեներալ և նախագահ կրանտ միայն ունեցած էր 1877ին, բայց ոչ այս քան շնորհալից որովհետև նոր լուսեաց բնաւորութիւնը բոլորովին հակապատկերն էր Ռուզվելթի երկարախօսութեան: Նաւախին և ցամաքային թափօրներ կազմուած էին և անմիջապէս սկսեցին իրենց պաշտօնները նաւամատոյցէն ՁԼ թնդանթի հարուածներն յայտարարեցին նաև ուն ժամանումը. ապա ճանբուն վրայ բոլոր նաւերն իրենց սուղիներով արձագանգ կը դառնային այդ ողոյնին: Վերջապէս ցամաք իջաւ օրուան մարդը. քաղաքապետի բարի գալուստի խօսքերէն ետք, նուագարաններու առաջնորդութեամբ սաւառալանալ օթօթօպիլով. հազարաւոր բերաններ կեցցէ՛ կը պօռային, դրօշակ ի ձեռին ճօճելով. հարկ չէ ըսել որ ամբողջ քաղաքը դրօշակներով պնդազարդուած էր արդէն:

Այսպէս է ազատ ժողովուրդը. ազատօրէն կ'զգայ, ազատօրէն կը գործէ և ազատօրէն կ'արտայայտէ իր զգացումները, անհոգ բոլորովին ուն չմտադէտ պատահարէ:

Եւ ասիկա մեզ կը յիշեցնէր այն խանդավառ ընդունելութիւնները որ կ, պոլսոյ ազգաբնակչութիւնները ցոյց տուին իրենց փախստական և կամաւոր ու կամայ աքսորականներու վերադարձին՝ ազատութեան արշալոյսի պահուն: Եւ ինչ համեմատութիւն: Անոնք իրենց նախկին մեծութիւնը ողբալով հազիւ հազ կարողացան իրենց սիրելի ծննդավայրը տեսնել, ասիկայ իր մեծութեանը մէջ փառաւորուելով աւելի կը մեծարուի և կը պանծացուի իբրև «ճարենիքին կուռք» որ արդէն յաջող պայմաններու և նպաստաւոր հանգամանքներու մէջ, կարող աշակիցներով և պաշտօնակիցներով՝ լաւ կազմակերպուած երկիր մը կառավարելով իրեն համբաւ կը շինէ, մինչ մեր գործիչները հայրենիք մը վերականգնելու, կազմակերպելու, և քայքայուած երկիր մը վերաշինելու համար սոսկ անհատական ջանքերով տքնելէ և տառապելէ ետք կը վերադառնան, իրենց տարիներու կարօտը առնելու համար քաղցրարօյր մայր հողէն:

Չէ՛, ասոնք թէ և չունին աշխարհահամբաւ անուն և մեծամեծ պատիւներ վայելելու գիւրութիւններ, սակայն ասոնք ալ կը ընդունին իրենց տառապող հայրենակիցներու անմասնաց երախտագիտութիւնը...:

ՏԻԳՐԱՆ ՄԿՈՒՆԴ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼԻՍ ՎԵՐԱԴՐՁԸ

Օսմանեան պատուիրակութիւնը (La delegation ottomane) փարիզ և Փրանսական մի քանի քաղաքներ այցելելէ յետոյ, անցած հինգշաբթի (յնս. 30) առաւօտ ժամ 6ին հասաւ Մարսելի երկաթուղիի կայարանը, ուր արգէն պատրաստ կը գտնուէին իրենց զիմաւորները:

Պատուիրակութեան նախագահը
իսմայիլ Ճէնանի պէյ ֆարիզ մնա-
ցած լինելով, այս անգամ պատուի-
րակութեան գլուխը կը գտնուէր
դեր-նախագահը Պէհա պէյ, կ. պօլ-
սի ծխախոտի բէժի տնօրէնը: Ո-
րովհետեւ նոյն օր ժամը 4ին պիտի
մեկնէին «Սէնէկալ» շոգենաւով կ.
Պօլիս վերադառնալու համար, ժա-
մանակ չկար Մարսէլի գործարան,
ները պտտեղու ինչպէս փափաք
յայտնուած էր ասկէ առաջ: Որպէս զի
պատուիրակներն այդ կարճ ժամա-
նակամիջոցի մէջ ազատ լինին իրենց
ուզածի պէս խումբեր կազմելու և
իւրաքանչիւրն իրեն հետաքրքրող
տեղերն երթալ գիտելու, պաշտօնա-
կան ընդունելութեան հանդէսները
կարճեցին: Առևտրական Սենեակը
կէսօրին պատուաճաշ մը տուաւ և
նոնց իր պալատի մէջ ուր 150 հրա-
ւիրեալներ սեղանակից կը գտնուէին:
Առևտրական սենեկի նախագահը Տ.
Լսդրին, աղանդերի ատեն, բաժակա-
ճառ մը խօսեցաւ, որով, ի միջի այ-
լոց, ցաւ յայտնեց թէ շատ քիչ ժա-
մանակ կըրցան վայելի իրենց ներկա-
յութիւնը: Պէհա պէյ շատ գեղեցիկ
ճառով մը պատասխանեց շնորհակալու-
թիւն յայտնեց այն ընդունելու-
թեան համար որ իրենց եղաւ Ֆրան-
սաի մէջ 3 շաբաթ իրենց կատարած
պտոյտի միջոցին և ըսաւ թէ ինչ որ
տեսանալու քայմութեան պարտի-
զին, խորհուրդայ կեդրոնին, այսերկրի
մէջ ուր ազատութիւնը կաճի, մեծ ու
զեւորութիւն պատճառած է իրենց, և
իրենց հոս տեսած ու սովորած օրի-
նակ պիտի լինի իրենց: Չանազան
անձնաւորութիւնների կենսացներէն
զատ, առաջարկեց խմել նաև Արևել-
քի դուռն եղող Մարսէլի և Ֆրանսա-
օսմաննան եղբայրութեան համար,
Առևտուրի և ճարտարարուեստի Հան-
րավարական գօլիքէի կեդրոնի նա-
խագահը Տ. Մասքիւրօ խօսեցաւ
վերջին բաժակաճառը որով յայտա-
րարեց նաև թէ Ֆրանսական պատ-
ուիրակութիւն մը առաջիկայ տարի
մայիսին փոխադարձ այցելութեան
պիտի երթայ կ. պօլիս:

Ժամը 3 էր երբ ճաշկերոյթը վեր-
ջացաւ: Ժամը 4ին երբ «Սէնէկալ»
շոգենաւը ճանաչայ կենէր Ֆրանսա-
կանին հետ օսմաննան դրօշակն ալ
պարզած, նահանգապետը և այլ պաշ-
տօնական անձնաւորութիւններ ու
օսմաննան զաղութի անդամներ ու-
րոնք շոգենաւը գնացած էին ողջերթ
մաղթելու, հոն բաժնուեցան օսմ. պատ-
ուիրակներէն, կեցցէ՛ Ֆրանսա, կեց-
ցէ՛ թիւրքի ազադակներին մէջ:

ՊՈՒԼԿԱՐԱԻՎԱՆԱԳՆՆԵՐԸ ՓԱՐՏԻՉԻ ՄԷՋ

Պուլկարիաի ֆէրտինանտ ցարն
ու Լիւնոնը ցարուհին Բեդերպուր
կէն և կ. պօլսէն յետոյ իրենց ար-
քայական առաջին այցելութիւնը
տունին փարիզին ուր հասան յունիս
23ին: Հանրապետութեան նախագա-
հը Տ. Ֆալիէր և իր տիկինը, Մերա-
կոյս և Երեսփոխանական ժողովն:

րի նախագահները, վարչապետը, ար-
տաքին գործերի նախարարը և այլն,
երկաթուղիի կայարանէն ընդունե-
ցին Ֆրանսայի հիւրերը և առաջնորդե-
ցին արտաքին գործերի նախարարու-
թեան ապարանքը իրենց բնակութեան
յատկացուած բաժինը: Ճանապար-
հին վրայ խանուած հանդիսատես ժո-
ղովրդի բազմութիւնը համակրական
ցոյցերով կը ծափահարէր:

Նոյն երեկոյին Լիւզէի պալատին
մէջ պատուաճաշ մը տրուեցաւ Պուլ-
կարիաի ցարին և ցարուհիին, ուր
Հանրապետութեան նախագահը
Պուլկարիաին և իր վեհապետներին
համար շատ համակրական բաժակա-
ճառ մը խօսեցաւ: Իրեն պատաս-
խանեց Ֆէրտինանտ ցարը, ներքո-
ղիւով Ֆրանսան իբրև անշահախնդիր
ախոյեան մը մարդկութեան ազատա-
կան և յառաջդիմական տենջանք-
ներին:

Թալորդ օրն ալ ցարը պատուա-
ճաշ մը տուաւ Հանրապետութեան
նախագահին և իր տիկնոջ: Այնուհե-
տև ուրիշ պատուաճաշեր ալ տրուե-
ցան Պուլկարիաի վեհապետներին
որոնք պտոյտներ նաև կատարեցին
փարիզի հետաքրքրական տեղերը,
իրենց ի պատիւ եղած զօրահանդէ-
սին և զանազան հանդէսների ներ-
կայ գտնուեցան և 5 օր փարիզ ան-
ցունելէ յետոյ, մեկնեցան շատ գոհ
եղած իրենց այցելութիւնէն:

ԹԻԻՐՔԻԱՆ ԼՈՒՐԵՐ

Սերաստիաի նորընտիր կուսակալ
Մէհմէտ Էմին պէյ մայիս 23/5 յու-
նիսի կիրակի օր իր պաշտօնատեղ
հասած և փառաւոր ընդունելու-
թիւն մ'եղած է իրեն:

— Ներքին գործերի նախարա-
րութեան կողմէն հայաբնակ նա-
հանգների հողային խնդիրներն ու
սուսնասիրելու պաշտօնով զրկուած
Թանձախումբը Էրզրում հասեր է
մայիս 24/6 յունիսին:

— Էտիւնէի մէջ ոստիկանական
տեսուչը Հրէի մը տունը խարխուլ
համարելով՝ բռնի փլցունել տալուն
համար մի քանի հազար Հրեայիներ
կը յարձակին ոստիկանութեան պաշ-
տօնարանին վրայ և կը քարկոծեն
ոստիկանական տեսուչը որ հազիւ
մահէն կազատի: Ոստիկան-զինուոր-
ները կրակ կընեն հրեայիներին վրայ
որոնցմէ՛ ոմանք կը վիրաւորուին:
40ի չափ հրեայիներ ձերբակալուելով
բանտարկուած են:

— Սամսոնէն Պուազ օթօմօպիլ
բանեցունելու համար ընկերութիւն
մը կազմուած է: Քիչ օրէն պիտի
սկսին կառքերն երթնելով որով կա-
րելի պիտի Սամսոնէն Սուազ (Սե-
բաստիա) երթալ 30 ժամէն մինչդեռ
այժմ վեց—եօթ օրէն կերթան:

— Հալէպի մէջ արմտիքի վաճա-
ռականները արուեստական կերպով
ցորենի թանկութիւն պատճառած
լինելով, անօթի մնացած ժողովուր-
դը յարձակեր է անոնց մթերանոցն
եղող խանին վրայ և ուզեր է աւարի

տալ, բայց ոստիկանութիւնը միջա-
մըտելով արգելեր է: Մէկ քանի հո-
գի վիրաւորուեր են:

ՅՈՒՆԱՌՈՒՄԱՆԱԿՆԸ

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բիրէի առջև պատահած դէպքը կը
սկսի հետզհետէ ծանր հետեանքներ ու-
նենալ:

Ռուսական շոգենաւային ընկերու-
թեան «Սիֆերաթոլ Թրոյան» շոգենաւը
յունիս 12ի կիրակի օր Բիրէի յունական
նաւահանգիստը հասած ժամանակ, Յոյ-
ների բազմութիւն մը յարձակեցաւ շո-
գենաւին վրայ: Ատոնք լսած լինելով
թէ թիւրքահայտակ կամ ուսմանահայա-
տակ յոյն դասալիք զօրքեր Սիֆերաթոլ
փոխած էին և եգիպտական կառավա-
րութիւնը կ. Պօլիս կը վերադարձունէ
այդ շոգենաւով, կուզէին իբր թէ ազա-
տի ատոնք. չորս կողմ կը խուզարկեն,
դուռներ կը կոտրեն և այդ պատուա-
կով գոյքեր կը յափշտակեն: Նրբ նա-
ւապետին, նաւաստիներին ու ճանքորդ-
ներին կողմէն դիմադրութիւն կը լինի,
կուռ մը կը ծագի և մի քանիներ կը
վիրաւորուին: Խտիվին քոյրը իշխանուհի
Յաթմա հանըմ որ նոյն շոգենաւին մէջ
էր, վախէն կը նուաղի. նոյնպէս կը
նուաղին Ռուսմանիաի գահաժառանգ իշ-
խանի որդին և այլիկը: Վիրաւորուած-
ներին մէջ կան և թիւրքեր:

Տեղական յոյն կառավարութիւնը կը
դանդաղի զսպել ամբոյսը և Ֆրանսական
ու անգլիական հիւպատոսների անձնա-
կան ջանքերով կը հաստատուի անգոր-
րութիւնը և շոգենաւը ճանքայ կեկէ
դէպի կ. Պօլիս:

— Ռուսէն և թիւրք կառավարու-
թիւններն այս դէպքի առթով եղած
զննանքի հատուցումը պահանջած են
յոյն կառավարութիւնէն:

— Ռուսմանիաի մէջ յոյների դէմ զըր-
գառութիւնը հետզհետէ կը օսաստիկանայայս
դէպքի պատճառով: Կըսուի թէ հելլենական
«Սթիւն» շոգենաւը երբ կալաց գնացեր
է, ցուցարարներ պաշարեր են շոգենաւը
և այնպէս ծեծեր են անոր նաւաստիներ
ը որ հարկ եղեր է դրէթէ ամէնքն ալ
հիւանդանոց փոխադրել: Բայց այս լուր
կը հերքեն ռուսէն թերթերը:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

**ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀԱՐԻՐԱՄԵԱՅ (1794-1894)
ՅՈՒՆԱՌՈՒՄՆԵՐԸ**

Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւո-
րութեան դարադարձին առթով 1894
թուականին հրատարակուած այս միա-
ձալ դիրքով և լուսատիպ (phototypi-
que) շքեղ պատկերի մեծութիւնն է
50x35 հարիւրորդամէթր և սպուած
է 70x45 հարիւրորդամէթր քարտո-
նի (carton) վրայ այլ և այլ բնագործի-
քով լրագրը դրուած է հայ լրագրու-
թեան հիմնադրին, Տ. Յարութիւն
ԳՏԻՅ. Շմաւոնեանի, պատկերը և բո-
լորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով
հրատարակուող բոլոր լրագիրները,
տնոնց գրէթէ ամենքի խմբագրապետ-
ների պատկերներով:

Գինն է 4 ֆրանք ճանապարհա-
ժախքը մէկտեղ հաշուած. իսկ Պարս-
կաստանի համար 2 ֆրանք և 50
սանթիմ:

* * *
Գալիւքեարեան Հ. Գ. — Պատու-
թիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ

մինչև մեր ժամանակը. Հատոր Ա.
1794-1860: Մէկ լուսատիպ պատկե-
րով: Գինն է, ճանապարհածախքովը
մէկտեղ, 2 ֆր. և 50 սնթիմ:

Վերոգրեալ թէ՛ պատկերը և թէ՛
գիրքը կարելի է ստանալ Արմենիաի
խմբագրատունէն, արժէքը կանխիկ
զրկելով:

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՆԱՌՈՒՄՆԵՐԸ

Արմենիաի Ա տարեշրջանի թիւերն
որոնք բոլորովին սպառած են, շա-
տերի հետաքրքրութեան առարկայ
դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ.
Փորթուգալեանի գրած առաջնորդող
յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփ-
ւած են այս Յոռչարարի մէջ որ ութա-
ձալ դիրքով 124 երեսներ կը բաղ-
կանայ: Գինն է 1 ֆր. 40 սանթիմ:

Տարածելու համար մէկ անգամէն
10 օրինակ գնողին կը զրկենք 10
օրինակը, ապահովագրուած ծրարով
10 ֆրանգի փոխարէն:

Դիմել Արմենիաի խմբագրութեան.

ԺԳ

ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

(ԶԱՔԱՐԻԱ ՍԹՈՂԱՆՈՎ)
ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ՔԱՐԳՄԱՆԵՑ
ՄԱՐՏԻՑ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ
1894

1 ֆրանգ և 40 սանթիմ:

Տարածելու համար մեծ քանակու-
թեամբ առնողներին 25 % զեղչ կը
լինի:

(Պարսկաստանի Հայերին համար
1 ֆրանգ է:)

Լուսինեան. Բառարան Հայերէնէ
Ֆրանսերէն (հայերէն շատ ոճերի և
ասացո անձերի ֆրանսերէն թարգ-
մանութիւններն ալ դրուած են): Բ.
տպգր. 16 ֆր.: Շքեղ կազմով:

Երատակ յիսնամայ յոբելեանի
Ազգային Սահմանադրութեան. 1860-
1910 մայիս 24:

(80x60 սանթիմէզր մեծութեամբ
գեղատիպ նկար մ'է որ կը պարու-
նակէ թիւրքիաի Հայերի Սահմա-
նադրութեան 20 հիմնադիրների լու-
սանկարներն ու ստորագրութիւննե-
րը, ինչպէս նաև 1861ի առաջին տա-
րեկարձի հանդէսին և կ. Պօլսի վեր-
ջին 15 պատրիարքների պատկերնե-
րը, գեղեցկապէս շարակարգուած:
Կը ծախուի կ. Պօլիս 100 փարա:
Մասնաւոր խաւաքարով, ապահով-
ուած բօստի ծախքով 5 զրուչ (1 ֆր.
և 10 սնթիմ): Ստանալու համար դի-
մել հրատարակչին որ է Չարդարեան
գրատուն, Չագճագճըլար փողոց, թիւ
24-26: կ. Պօլիս:)

**ՅՆՕՐԷՆ—ԻՄԱԳԻՐ
Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ**

ԻՄՐՍԷՆ

Հայերէն տպարան Մ. Փարբալաիեօի
Le Gérant: François CARRIERE
Marseille. — Imprimerie da Midi